1667 թ. Հայ-ռուսական առեւտրական պայմանագիրը եւ Նոր Զուղայի ինքնավար մարմինները

ՇՈՒՇԱՆԻԿ ԽԱՉԻԿԵԱՆ

Ըստ աւանդական տեսակէտի ԺԷ· դարի կէսերից արդէն Նոր Զուղայում գոյութիւն է ունեցել հայկական առեւտրական կոմպանիա (ընկերութիւն)։ Այդ կոմպանիայի լիազօր-ներկայացուցիչները 1667 թ·ի Մայիսի 31-ին Մոսկուայում ստորագրել են առեւտրական նշանաւոր այն պայմանագիրը, որով բարենպաստ պայմաններ են ստեղծուել հայ-ռուսական տնտեսական կապերի զարգացման համար։ Ռուս անուանի պատմաբան Ե· Զեւակինն, օրինակ, հայկական կոմպանիայի գոյութիւնը ոչ միայն անվիճելի է համարել, այլ նոյնիսկ յանդգնել է այն եզրակացութեան, որ կոմպանիան ստեղծել են Ստեփան Ռոմոդամսկին եւ Գրիգոր Լուսիկովը, այսինքն Նոր Զուղայի հայ վաճառականների կողմից Մոսկուա առաքուած բանագնացները[1]։ *Անուանի պատմաբան Աշոտ Յովհաննիսեանը, նոյնպէս, կոմպանիայի գոյութիւնն անառարկելի համարելով, մէկ այն կոչել է Նոր Զուղայի կամ Սպահանի «Հայ առեւտրական ընկերութիւն», մէկ՝ «Իրանահայ առեւտրական ընկերութիւն» եւ, նոյնիսկ ուղղակի «Հայ առեւտրական ընկերութիւն»*[2], *յստակ խօսք չասելով, թէ ում անունից է հան-*

1· Ե· Ս· Զեւակին, *Պարսկական Հարցը Ռուս-Եւրոպական Յարաբերութիւնների Մէջ ԺԷ· դ·*, «Իստորիչեսկիէ Զապիսկի», 1940, թիւ 8, էջ 158 (ռուսերէն)։

2· Աշոտ Յովհաննիսեան, *Դրուագներ Հայ Ազատագրական Մտքի Պատմութեան*, Ա· հտ·, Երեւան, 1957, էջ 441-442։

դէս եկել այդ ընկերութիւնը, ողջ հայ վաճառականութեա՞ն, թէ՝ նրա մի հատուածի[3]։

Համատարած այս տեսակէտի ստեղծման եւ կենսունակութեան համար որոշ տուեալներ կային հենց 1667 թ.-ի վերոյիշեալ պայմանագրի ռուսերէն ընդարձակ տարբեր հատուածներում, ինչպէս եւ այդ ժամանակ ու քիչ յետոյ շարադրուած տրիխուային բազմաթիւ փաստաթղթերի մէջ։ Նոր Ջուղայից Մոսկուա ժամանած վերոյիշեալ բանաղնացները բազմիցս յիշատակուած են որպէս «հայկական կոմպանիայի կողմից առաքուած» անձինք. «արմեանսկիէ կոմպանէյշչիկի» (իմա՝ «հայկական կոմպանիայի անդամներ») են կոչուած նաեւ Սպահանից Մոսկուա ժամանած բազմաթիւ վաճառականներ[4]։

Ժէ. դ. կէսերին, ինչպէս յայտնի է, արեւելեան բազմաթիւ երկրներում տնտեսական ամուր յենակէտեր էին ստեղծել եւրոպական առեւտրական կապիտալի, միմեանց դէմ անհաշտ պայքար մղող, երեք հզօր կազմակերպութիւններ։ Դրանցից առաջինը՝ Անգլիական Արեւելա-Հնդկական Կոմպանիան էր, որ կեանքի կոչուեց 1600 թ.-ին եւ գոյատեւեց մինչեւ 1858 թ.։ Երկու տարի անց՝ 1602 թ.-ին, միմեանց դէմ մրցակցող մի քանի կոմպանիաների համաձուլումով, ստեղծուեց Հոլանտական կամ Նիդերլանդական Կոմպանիան (որը

---

3. Հայկական կոմպանիայի գոյութեան մասին նման արտայայտութիւններ կարելի է գտնել ԺԷ. դարի հայ-ռուսական յարաբերութիւնների պատմութեանը նուիրուած շատ աշխատութիւնների մէջ։ Վ. Պարսամեանը, օրինակ, կոմպանիան համարել է «առեւտրական լայն հնարաւորութիւններ ունեցող կազմակերպութիւն» եւ Զաքար Սահրադեանին՝ այդ ընկերութեան աչքի ընկնող դեկավարներից մէկը, (տես՝ Վ. Պարսամեան, *Հայ-Ռուսական Յարաբերութիւնների Պատմութիւնից*, «Տեղեկագիր», 1952, թիւ 7, էջ 72)։ Վ. Դիլոյեանը յանգել է այն եզրակացութեան, որ ջուղահայ վաճառականները «եւրոպական վաճառականների օրինակով» համախմբուել են առեւտրական մի ընկերութեան մէջ որ կրել է «Ջուղայի հայ առեւտրական ընկերութիւն պիտակը»։ Այդ ընկերութիւնը առեւտրական յարաբերութիւնների մէջ է եղել օտար պետութիւնների եւ առեւտրական ընկերութիւնների հետ, կնքել է պայմանագրեր։ «Այս տեսակէտից, — գրել է նա, — նշանաւոր էին 1667 թ. ռուս կառավարութեան եւ 1688 թ. անգլիական «Օստ-հնդկական ընկերութեան», հետ կնքած պայմանագրերը եւ այլն (տես՝ Վ. Դիլոյեան, *Լաղարեանների Հասարակական-Քաղաքական Գործունէութեան Պատմութիւնից*, Երեւան, 1966, էջ 21–22)։

4. Տես՝ *Հայ-Ռուսական Յարաբերութիւնները ԺԷ. Դարում*, Փաստաթղթերի ժողովածու, Երեւան, 1953, էջ 56, 58, 111, 113, 203 (ռուսերէն)։ *Հայ-Ռուսական Յարաբերութիւնները ԺԸ. Դարում*, Փաստաթղթերի ժողովածու, Բ. հատ., մասն Ա., Երեւան, 1964, էջ 15, 22, 29 եւ այլն (ռուսերէն),

դադարել է գոյութիւն ունենալուց 1798 թ.-ին), իսկ 1664–1770 թթ.-ին մեծ գործունէութիւն է ծաւալել նաեւ Ֆրանսական Արեւելա-Հնդկական Կոմպանիան։ Իրենց մայր երկրում ձեռք բերելով Արեւելքի հետ առեւտուր անելու մենաշնորհը, այդ կոմպանիաներն ստեղծեցին զինական ուժեր ու ռազմական նաւատորմ եւ, արիւնահեղ պատերազմներ մղելով գաղութացման ցածր մակարդակի վրայ գտնուող հեռաւոր-արեւելեան ժողովուրդների դէմ, իրենց տիրապետութիւնը հաստատեցին Հնդկաստանի, Հնդկաչինի, Ինտոնեզիայի, Ֆիլիպինեան կղզիների վրայ, դարեր շարունակ շահագործելով նուաճուած ժողովուրդներին։ Վերոյիշեալ կոմպանիաները լիազօրուած էին իրենց երկրների պետական մարմինների կողմից կառուցելու բերդեր, ամրութիւններ, պայմանագրեր կնքելու տեղական իշխանութիւնների հետ, պատերազմելու՝ նոր երկրամասեր գրաւելու համար եւ այլն[5]։ Առեւտրական ամենազօր այս կոմպանիաները կեանքի էին կոչուել բազմաթիւ խոշոր վաճառականների, դրամատան տէրերի, կալուածատէրերի, պետական բարձրաստիճան պաշտօնեաների դրամագլուխներով։ Հոլանտական կոմպանիան, օրինակ, հիմնադրուել էր 6·5 միլիոն ֆլորին դրամագլխով, որի կէսից աւելին պատկանում էր Ամստերդամի վաճառականներին ու դրամատան տէրերին։ Սրանք վճռական դեր էին կատարում նաեւ կոմպանիայի ղեկավար մարմիններում։ Կոմպանիաների հասոյթները համամասնաբար, ըստ իրենց մուծած դրամագլխի եւ ձեռք բերած բաժնետոմսերի, բաժանւում էր բոլոր բաժնետէրերի վրայ։ Առիւծի բաժին, բնականաբար, տէր էին դառնում խոշորագոյն բաժնետէրերը։

Միջին եւ Հեռաւոր արեւելեան երկրների գաղութացման սկիզբը, ինչպէս յայտնի է, համընկնում է աշխարհագրական մեծ յայտնագործութիւնների հետ։ Վերոյիշեալ կոմպանիաների եւ այդ երկրների հաղորդակցութեան հիմնական ճանապարհները ծովային ու ովկիանոսային այն ուղիներն էին, որ Եւրոպայից ձգտում էին դէպի հարաւ, ապա՝ Բարեյուսոյ Հրուանդանի վրայով թեքուելով դէպի հիւսիս-արեւելք, մանաւանդ՝ Հնդկական Ովկիանոս։ Սակայն հաղորդակցական ոչ պակաս նշանակութիւն ունէին ծովային ու ցամաքային այն ուղիները, որոնք Հնդկաստանը շաղկապում էին Իրանի, Միջագետքի, Եգիպտոսի, Փոքր Ասիայի հետ եւ տարբեր ուղղութիւններով դուրս գալիս նախ Միջերկրական Ծովի նաւահանգիստները (Ալեքսանդրիա, Ալեքսանդրէտ, Զմիւռնիա, Կոստանդնուպոլիս), այնու-

---

5· Ա· Ն· Զիսսոզվոնով, Նիդեռլանդական Արեւելահնդկական Կոմպանիայի կնքահայրերը, «Նովայա ի Նովէյշայա Իստորիա», 1976, թիւ 6, էջ 134 (ռուսերէն)։

հետեւ նաեւ Սեւ Ծով (Տրապիզոն, Սինոպ) եւ Կասպից Ծով (Ռեշտ, Աստրախան)։

Անգլիական, հոլանտական եւ ֆրանսական արեւելա-Հնդկական վերոյիշեալ կոմպանիաները երկար պայքարելով այդ ճանապարհներով կատարուող առեւտրի մենաշնորհն իր ձեռքն առած վենետիկեան հանրապետութեան դէմ եւ դուրս մղելով նրան այդ վայրերից, խարիսխ նետեցին նաեւ Լեւանթեան առեւտրի հիմնական կեդրոններում, իրենց ազդեցութիւնը տարածելով նաեւ այդ ճանապարհների վրայ։ Ըստ որոշ ուսումնասիրողների, ԺԷ. դարի կէսերին առեւտրական այդ կոմպանիաների համար Լեւանթեան առեւտուրը, իր ծաւալով ու նշանակութեամբ, հաւասարազօր էր Հնդկաստանի հետ ովկիանոսային ճանապարհով կատարուող առեւտրին[6]։ Այդ հանդամանքը, առաջին հերթին, բացատրւում է մետաքսի հումքի միջազգային նշանակութեան չեշտակի այն աճով, որ տեղի ունեցաւ ԺԷ. դ. կէսերին՝ վճռապէս ազդելով նաեւ հայ խոջայական կապիտալի միջազգային կապերի ամրապնդման վրայ։

Մետաքսի արտադրութեան համաշխարհային նշանակութիւն ունեցող կեդրոնը Իրանի հիւսիսային շրջաններն էին՝ Գիլանը (այստեղ արտադրւում էր Իրանի մետաքսի գրեթէ կէսը), Մազանդարանը, Խորասանը եւ Անդրկովկասը (յատկապէս Շիրվանը, Վրաստանի արեւելեան շրջանները եւ Ղարաբաղը)։ Ադամ Օլեարիուսի հաղորդած տուեալներով, «հենց միայն Գիլանը յաջորդակ տարիներին տալիս է ութը հազար հակ [մետաքս], Շիրվանը մատակարարում է երեք հազար հակ, Խորասանը՝ մինչեւ երեք հազար, Մազանդարանը՝ երկու հազար, Ղարաբաղը՝ երկու հազար։ Միայն շուրջ մէկ հազար հակն էր օգտագործւում երկրի [Իրանի] ներսում»[7]։

---

6. Masson, **Histoire du Commerce Français Dans le Levant au XVII siècle.** I-II, Paris, 1911.

7. Ադամ Օլեարիուս, *Հանդամանալից Նկարագրութիւն Հոլշտինեան Պատգամաւորութեան՝ Առաքուած Մոսկովիա եւ Պարսկաստան* 1633, 1636 *եւ* 1639 *թթ.*, Մոսկուա, 1870, էջ 791 (ռուսերէն թարգմ.)։ Ն. Գ. Կուկանովա, *ԺԷ-ԺԹ. դդ. Առաջին Կէսի Ռուս-Իրանական Առեւտրական Յարաբերութիւնների Պատմութեան Ուրուագծեր*, Սարանսկ, 1977, էջ 69 (ռուսերէն)։ Նշենք նաեւ, որ արտադրուող մետաքսի չափի մասին կան նաեւ այլ, իրար հակասող տուեալներ։ Ըստ Շարդենի, ԺԸ. դարի կէսերին Իրանից ամէն տարի արտահանուել է 22·000 հակ մետաքս (տես՝ Ղ. *Ալիշան*, *Սիսական*, 444), իսկ ըստ Գրիգոր Լուսիկենցի «տարէն մօտ ԸՌ (8000) խակ Շային ֆուլի երկրումն (այսինքն՝ ողջ Իրանում) ապրիշում դուս գկու, որի միւն խակն Զ (6) փուտ այ» (*Հայ-Ռուսական Յարաբերությունները ԺԷ. դարում*, էջ 71)։ Նոյնանման տեղեկութիւն կայ նաեւ փաստաթղթերի նոյն ժո-

Այսպիսով, արտադրուող հումքի 90 տոկոսից աւելին նախատեսւում էր եւրոպական երկրների պահանջարկը բաւարարելու համար, իսկ այն տարեցտարի հսկայական չափով աւելանում էր, քանի որ մետաքսէ դործուածքների դործածութիւնը լայն տարածում էր դանում ամենուրեք։ Այն օդտադործում էին ոչ միայն աղնուական դասին պատկանող մեծահարուստ անձինք, այլեւ բուռն զարդացման ընթացքի մէջ մտած քաղաքների բնակչութեան բարեկեցիկ խաւը։ Անդլիայի, Հոլանտայի, հետագայում նաեւ Ֆրանսայի արագ զարդացող մետաքսագործական ձեռնարկութիւնների անընդհատ աճող պահանջարկը բաւարարւում էր յաճախակի փոփոխուող նորաձեւութեանն ընդառաջող եւ համեմատաբար էժան դնահատուող մետաքսէ տարբեր տեսակի ու արժէքի դործուածքների արտադրութեամբ[8]։

Բնականաբար, արդիւնաբերողները մտահոդուած էին մետաքսի հումքի արտահանութեան վայրերի հետ անմիջական կապեր հաստատելու, այն աւելի էժան դներով ձեռք բերելու եւ ապահով ու կարճ ճանապարհներով իրենց երկրները փոխադրելու հարցերով։

Կար երեք ճանապարհ։ Առաջինը եւ հնագոյնը Թուրքիայի վրայով անցնող աւանդական ճանապարհն էր, որն իր երկու ճիւղերով ձդւում էր դէպի Միջերկրական Ծովի արեւելեան ափերը, անցնելով նաեւ Պատմական Հայաստանի նահանդներով։ Այս ճանապարհով առեւտուր էին անում դերաղանցապէս հայ վաճառականները, թուրքական պետական դանձարանին վճարելով դրեթէ այնքան մաքս, որքան վճարում էին մետաքսը դնելիս։ Երկրորդը՝ Գիլանից Կասպից Ծովով դէպի Աստրախան, այնուհետեւ Ռուսաստանի վրայով եւ Սպիտակ Ծովով դէպի եւրոպական երկրներ տանող ճանապարհն էր։ Այստեղ եւս հայերն առաջին տեղն էին դրաւում[9]։ Երրորդ ճանապարհը ցամաքային ուղիներով ձդւում էր դէպի Պարսից Ծոցի նաւահանդիստներն ու այնուհետեւ ովկիանոսային ուղիներով դէպի Եւրոպա։

դրվածուի մի այլ գրութեան մէջ (նոյն տեղում, էջ 46)։ Եթէ Շարդենի տուեալը չափազանցուած համարենք, իսկ Տուսիկովի տուեալը՝ նուազեցուած, կը գանք այն համոզման, որ իրականութեանն աւելի մօտ է Ադամ Օլեարիուսը։

8. Ռ. Դ. Ռոլովա, *Իտալիայի Տնտեսական Զարդացման Հիմնական Գծերը ԺԶ–ԺԷ. դդ.* (տպագրուած «Եւրոպայի, Ասիայի եւ Ամերիկայի Արդիւնաբերութեան եւ Գիւղատնտեսութեան Մէջ Կապիտալիզմի Ծագումը» խորագրով ռուսերէն ժողովածուի մէջ, էջ 85–86, 92–93 եւ այլն)։

9. Ե. Ս. Զեւակինը վերը յիշատակուած իր ուսումնասիրութեան մէջ քաղուածք է անում ռուս մի վաճառականի գրուածքից, ուր ասուած է, որ «Անգլիացիները եւ հոլանտացիները թուրքական տարածութիւններով ուղեւորւում են Ղզլբաշի երկիր··· Ղզլբաշում նրանք ձեռք են բերում հում մետաքս մէկ փութին

Կասպից Ծովով դէպի Ռուսաստան տանող ճանապարհը շատ աւելի ապահով էր, ձեռնտու եւ կարճատեւ, քան այս երրորդ եւ նորագոյն ճանապարհը։ Չնայած դրան, հայ վաճառականները ոչ շատ յաջող փորձեր էին կատարում այս ճանապարհով կատարուող առեւտրի մէջ եւս իրենց մասնակցութիւնը բերելու[10]։

Անհրաժեշտութիւն չկայ յատուկ շեշտելու այն հանգամանքը, որ ե՛ւ մետաքս վաճառող կողմը՝ Պարսից շահն ու արքունիքի հետ սերտ կապերի մէջ եղող հայ վաճառականները, ե՛ւ եւրոպական երկրների մետաքսէ գործուածքներ արտահանողները ձգտելու էին առաւել շափով օգտուելու ամենից աւելի ապահով եւ, մանաւանդ, քիչ ծախսեր պահանջող ճանապարհից։ Բոլոր ուսումնասիրողները նշում են, որ այդպիսին էր Կասպից Ծովով եւ Ռուսաստանով անցնող ճանապարհը։

Սպիտակ Ծովով Ռուսաստան ներթափանցելու եւ Վոլգա–Կասպեան ճանապարհով Իրանի ու արեւելեան այլ երկրների հետ անմիջական կապ հաստատելու գծով առաջին քայլերը կատարել էին անգլիացիները, դեռեւս ԺԶ. դարի կէսերից։ Անթոնի Ջենկինսոնն էր, որ որպէս Արեւելա–Հնդկական կոմպանիայի ներկայացուցիչ, ռուսական ցարից ստացաւ այդ ճանապարհով առեւտուր անելու որոշ առանձնաշնորհումներ։ Նրան հետեւեցին կոմպանիայի ուրիշ անդամներ եւս[11]։ Սակայն, ռուսական իշխանութիւնները, վիտակցելով այն մեծ վտանգը, որ սպառնալու էր ռուսական ներքին շուկային եւ արտաքին առեւտրական կապերին օտարերկրեայ, մասնաւորապէս, անգլիական դրամագլուխի ներթափանցման հետեւանքով, վերացնում են այդ արտօնութիւնները։ Զրկուելով դրանցից, անգլիական Արեւելա–Հնդկական կոմպանիայի ներկայացուցիչները շարունակում են առեւտուր անել հիւսիսային ծայրամասում՝ Արխանգելսկում, բայց Իրանի հետ անմիջական կապ հաստատելու այդ հնարաւորութիւնից

վճարելով 15 կամ 16 ռուբլի··· երբ նրանք փոխադրում են այն Թուրքիայի վրայով, նրանցից գանձում են գնուած ապրանքի արժէքին հաւասար մաքս», (Ե. Ս. Զեւակին, նշ. աշխ., էջ 131)։

10. Վ. Ա. Բայբուրդեանը իր՝ Նոր Զուղայի Հայկական Գաղութը ԺԷ. դ. ռուսերէն աշխատութեան էջերում (Երեւան, 1969, էջ 31–33) տուեալներ է մէջ բերել այն մասին, որ 1580 թ. յետոյ, երբ Իսպանիան եւ Փորթուկալիան միասնական պետութիւն կազմեցին, հայերը մետաքսի բեռներ էին փոխադրում ովկիանոսով, հասցնելով այն Իսպանիայի Կադիքս նաւահանգիստը, չնայած ստիպուած էին Հորմուզում վճարել փորթուկալացիներից գանձուող մաքսի կրկնապատիկը։

11. Յովհ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, Ա. հտր., ԺԳ–ԺԶ. դար (1253–1582), Երեւան, 1932, էջ 344–459։

եւս զրկուելով, ասպարէզն ամբողջովին բացւում է հայ խոջայական կապիտալի համար[12]։

Հոլանտան 1580 թ.-ին ազատագրուելով իսպանական լծից, բուռն զարգացման ուղին էր բռնել եւ ԺԶ. դարի սկզբներին դարձել օրինակելի զրամատիրական երկիր, դարի կէսերին հասնելով արդէն առեւտրական իր հզօրութեան բարձրագոյն կէտին[13]։ Անգլիացիների հետ միասին պայքարելով իտալացի եւ իսպանացի մրցակիցների դէմ, հոլանտացիները ընդլայնեցին իրենց առեւտուրը Լեւանթեան երկրների հետ։ 1624 թ. Ամստերդամում ստեղծուեց յատուկ հիմնարկութիւն, որի պարտականութիւնն էր հսկել Միջերկրական Ծովում կատարուող միջազգային կապերի վրայ։ Տարեկան 30-ի չափ առեւտրական նաւեր Ամստերդամից այցելում էին Զմիւռնիա եւ Լեւանթեան այլ կեդրոններ։ Մեծ չափերի էին հասել նաեւ հոլանտացիների կապերը Հալէպի հետ[14]։ Այստեղ հոլանտացիները (ինչպէս եւ եւրոպական միւս երկրների ներկայացուցիչները) առեւտուր էին անում առաջին հերթին ջուղայեցի հայ վաճառականների հետ, որոնց ձեռքում էր կեդրոնացած Իրանի մետաքսի ներմուծումը Հալէպ։ ԺԷ. դարի սկզբներին Հալէպի տնտեսական կեանքի հրամանատարական բարձունքներին էր հասել դլխաւոր մաքսապետի պաշտօնը դրաւած նշանաւոր Խոջա Պետիկը՝ հին Ջուղայից Հալէպ ներգաղթած Կիրակոս վաճառականի որդին, իր Սանոս եղբօր հետ միասին։ 1615 թ.-ի մի համաձայնագրի մէջ Խոջա Պետիկը յիշատակուած է որպէս նորին վեհափառութիւն Հոլանտայի թագուհու հաւատարիմ ներկայացուցիչը (էմինը) Հալէպի մէջ[15]։ Հոլանտական Արեւելա-Հնդկական Կոմպանիայի ներկայացուցիչները, 1623 թուականից սկսեցին ներթա-

---

12. Ե. Ս. Զեւակին, *նշ. աշխ.*, էջ 132–134։

ԺԸ. դարում անգլիացիները մէկ անգամ եւս փորձեցին օգտագործել այդ ուղին, այս անգամ Սպիտակ Ծովի փոխարէն Ռուսաստան ժամանելով Բալթիկ Ծովի եւ Ս. Պետերբուրգի վրայով։ 1734 թ. կնքուած ռուս-անգլիական դաշնադրութեան համաձայն անգլիացիները Կասպից Ծովով առեւտուր անելու իրաւունք էին ստացել։ Սակայն շատ շուտով պարզուեց, որ այդ վնաս էր բերում ոչ միայն Ռուսաստանի տնտեսական, այլեւ քաղաքական շահերին եւ, 1746 թ.-ին անգլիացիների ձեռք բերած իրաւունքները չեղեալ յայտարարուեցին։ Տես՝ *Խառնիչեսկիէ Զապիսկի*, 1950, թիւ 33, էջ 109։

13. Կ. Մարքս, *Կապիտալ*, Ա. հատ., Երեւան, 1954, էջ 784։

14. Ադոլֆ Բեռ, *Համաշխարհային Առեւտրի Պատմութիւն*, բաժին երկրորդ, Մոսկուա, 1876, էջ 175–176 (ռուսերէն)։

15. Ա. Սիւրմէեան, *Պատմութիւն Հալէպի Հայոց*, Գ. հատ., Փարիզ, 1950, էջ 288–289։

վանցել Իրան եւ դարի կէսերին դարձան Իրանական շուկայում առաջին տեղը գրաւող եւրոպացիները։ Այդ յաջողութիւնները զգալի չափով պայմանաւորուած էին տնտեսական այն սերտ կապերով, որ ստեղծուել էին հոլանտական կոմպանիայի եւ հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչների միջեւ։ Ամսդերտամը ծանօթ էր հայերին ԺԶ. դարի 60-ական թուականներից։ 1660-61 թթ. այս քաղաքն այցելեցին մի քանի գոհարավաճառ հայեր, որոնց նպատակն էր վաստակած դրամներով ձեռք բերել հոլանտական ապրանքներ, արեւելեան երկրներ տանելու համար։ Այդ կապերը յատկապէս 1634 թ.ից յետոյ շատ աւելի մեծ ծաւալ ընդունեցին[16] եւ ԺԷ. դարի կէսերին արդէն Հոլանտա էին այցելում մեծ թուով վաճառականներ, ինչպէս Նոր Ջուղայից, այնպէս էլ Դաղթան գաւառի հայկական առեւտրական գիւղաքաղաքներից (յատկապէս Ագուլիսից) եւ այլ վայրերից։ 1660 թ. Ամսդերտամում գոյութիւն ունէր կազմակերպուած դաղթօջախ՝ հայկական եկեղեցով, 60 տուն բնակչութեամբ։ Դրանց շարքում գեկավար դիրք էր գրաւել նոր Ջուղայեցի մեծահարուստ վաճառական Առաքելը, որն ամէն տարի Գիլանից Ամսդերտամ էր ներմուծում հինգ միլիոն ռուբլու արժողութեամբ մետաքս եւ այդ դրամարով գնում էր հոլանտական ապրանքներ, Իրանի շուկաներում վաճառելու համար[17]։ Ամսդերտամը միաժամանակ դարձաւ հայ տպագրութեան կեդրոններից մէկը։ Ոսկան Երեւանցու, Ղուկաս Վանանդեցու եւ ուրիշ երախտաւորների ջանքերով ԺԷ. դարի երկրորդ յիսնամեակի ընթացքում այստեղ հրատարակուեցին հայերէն փառայեղ գրքեր՝ առաջին տպագիր Աստուածաշունչը, պատմագրական մի շարք արժէքաւոր ընտրքեր, ինչպէս նաեւ հայ վաճառականների համար պիտանի առեւտրական ձեռնարկներ, աշխարհագրական ու գիտական երկեր[18]։

Հետեւելով անդլիացիների օրինակին, հոլանտացիները նոյնպէս եռանդուն փորձեր կատարեցին մետաքսի հումքը Ռուսաստանի

---

16. Ըստ Ն. Գ. Կուկանովայի այդ բացատրում է այն իրողութեամբ, որ հենց այդ թուականին էր, որ Հոլշտինեան կոմպանիան հրաժարուեց Ռուսաստանի վրայով պարսկական մետաքսը Եւրոպա փոխադրելու այն պայմաններից, որ առաջարկում էին ռուսական պետական մարմինները (տես՝ Ն. Գ. Կուկանովա, *Նչ. աշխ.*, էջ 71)։

17. Fr. Macler, **Quatre Confèrences sur l'Arménie et les Arméniens Faites en Holland**, Paris, 1932, pp. 247-251.

18. Գարեգին Լեւոնեան, *Հայ Գիրքը եւ Տպագրութեան Արուեստը*, Երեւան, 1940, էջ 101-125։

վրայով Հոլանտա արտահանելու ուղղութեամբ։ 1615, 1620 եւ 1630 թթ.ին այդ նպատակով կատարուած փորձերը դրական արդիւնք չտուեցին։ Ռուսական իշխանութիւնները, երկիւղելով Արեւելա-Հնդկական հզօր ընկերութեան Ռուսաստանում յենակէտեր ունենալու անցանկալի հետեւանքներից, մերժեցին ընկերութեանը տարանցումի իրաւունք շնորհել։ Տարանցումի իրաւունքը, որի ստացման համար մեծ ջանքեր էին գործադրում եւ անգլիացիները, եւ հոլանտացիները եւ եւրոպական մի շարք այլ երկրների կառավարող շրջաններ ու առեւտրական կոմպանիաներ[19], ի վերջոյ, 1667 եւ 1678 թթ.

---

19. Այս հարցին անդրադարձել է Ե. Ս. Զեւակինը, մասնաւորապէս ուշադրութիւն դարձնելով այն հանգամանքների վրայ, որ բացի Վոլգա-Կասպեան նաւապարհից, Եւրոպայի եւ Իրանի միջեւ ապրանքափոխանակութիւնը կատարւում էր նաեւ Վարշաւա-Լիւբլին-Եաշ-Սեւ Ծով-Անդրկովկաս-Իրան երթուղիով, որը բանուկ էր դարձել յատկապէս նշուած վայրերի բոլոր տնտեսական կեդրոններում կարեւորագոյն դեր կատարող հայ վաճառականների շնորհիւ։ Խօսելով այդ մասին եւ անդրադառնալով լեհական դիւանագէտ հայազգի Բոգդան Ղրդիի գործունէութեանը, Ե. Զեւակինը յիշատակում է այն փաստը, որ այս Բոգդանը, հանդիպելով նոր ջուղայեցիների լիազօր ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովի հետ, ասել է նրան, որ հայ-ռուսական պայմանագրով շահագրգռուած են նաեւ լեհերը։ Բնութագրելով այս հարցերը Ե. Ս. Զեւակինը եզրակացնում է, որ «ոչ միայն պարսկահայերն էին ուղեւորւում Լեհաստան, այլեւ Լեհաստանից Պարսկաստան էին մեկնում վաճառականներ (հաւանաբար նոյնպէս) մեծ մասամբ ծագումով հայ» (տես՝ *Ե. Ս. Զեւակին, նշ. աշխ.*, էջ 141–146)։ Այստեղ ամէն ինչ հիմնաւորուած է բացի փակագծերի մէջ ասուած «հաւանաբար նոյնպէս» բառերից։ Հայ-ուկրաինական դարաւոր առընչութիւններն ուսումնասիրող մասնագէտները հսկայական աշխատանք են կատարել վերջին երկու տասնամեակի ընթացքում եւ արժէքաւոր փաստեր են դրել շրջանառութեան մէջ, որեւէ կասկած չթողնելով, որ Լեհաստանից Իրան այցելող վաճառականներն, իրօք, եղել են լեհահայեր։

Ռուսաստանի վրայով Իրանի հետ տնտեսական կապեր հաստատելու փորձեր կատարուել են նաեւ Շուէտիայի կողմից։ Շուէտական դեսպան Ֆաբրիցիուսի ջանքերն այս ուղղութեամբ 1686 թ.ին յանգում են այն արդիւնքին, որ ռուսական իշխանութիւնները իրաւունք են տալիս հայերին արեւմտեան եւրոպական երկրներ մեկնել ոչ միայն Արխանգելսկով, այլ նաեւ Նովգորոդով, անցնելով Շուէտիայի տիրապետութեան տակ գտնուող շրջաններով։ Տեղին է նշել, որ Նաղուբ Սամոկուտլի անունով մի հայ վաճառական՝ 1670 թ.ին Բրանդերբուրգի կիւրֆուրստի նամակով ժամանել է Մոսկուա։ Նամակում ասուած է եղել, որ այդ Նաղուբը կիւրֆուրստի առեւտրական գործակալն է եւ նպատակ ունի Իրանից Պրուսիա արտահանել մետաքս եւ այլ ապրանքներ (տես՝ Ե. Ս. Զեւակին, *նշ.աշխ.*, էջ 153–154)։

Հարցի ուսումնասիրութեան այսօրուայ մակարդակը թոյլ է տալիս եզրա-

պայմանագրերի նախատեսումներով, ռուսական պետական մարմինները չնորհեցին Նոր Զուղայի հայ վաճառականներին։ Հոլանտացիներին թույլատրուեց միայն Արխանգելսկում առեւտուր անել արեւելքից ժամանող վաճառականների, այսինքն՝ հայերի հետ, իսկ հայ վաճառականներին էլ խորհուրդ տրուեց Արխանգելսկից եւրոպական երկրներ մեկնելիս առաջնութիւնը տալ Հոլանտային[20]։

Ռուսաստանի տնտեսական զարգացումը խթանող ծրագրեր մշակող նշանաւոր քաղաքական գործիչ ու հայրենասէր Բ. Ի. Օրդին-Նաշչոկինը, որի գլխաւորութեամբ էին նախապատրաստուում հայ-ռուսական առեւտրական պայմանագրի կէտերը, իր գործընկերների հետ միասին քաջ գիտակցում էր, որ հայ վաճառականները, ի տարբերութիւն արեւելեան երկրների հետ առեւտրի մենաշնորհ ձեռք բերած եւրոպական առեւտրական կոմպանիաների, չէզոք քաղաքական դիրք լինելով, որեւէ կերպ չեն կարող խոչընդոտել Ռուսաստանի տնտեսական զարգացմանը եւ Ռուսաստանի վրայով դէպի արեւելեան երկրներ անցնելու իրաւունքն օգտագործել քաղաքական-դաղութատիրական ինչ-որ ծրագրերի իրականացման նպատակով։ Ընդհակառակը, լինելով ճնշուած ու հարստահարուած քրիստոնեայ մի ժողովրդի ներկայացուցիչներ, հայերն իրենք են օգնութեան կարօտ եւ կարող են ռուսական պետութեան համար հաւատարիմ դաշնակից լինել։

Այսպիսով, հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչները յաղթանակով դուրս եկան շուրջ մէկ դար ձգուող (ԺԶ. դարի վերջերից մինչեւ 1667 թուականները) այն պայքարում, որ մղում էին Ռուսաստանի վրայով անցնող եւ միջազգային նշանակութիւն ունե-

---

կացնելու, որ Ռուսաստանի վրայով Իրանի եւ արեւելեան այլ երկրների հետ տնտեսական կապեր հաստատելու բոլոր փորձերը, անկախ այն բանից, թէ եւրոպական որ երկրի նախաձեռնութեամբ էին ներկայացուում ռուսական պետական մարմիններին, մեծամասնութեամբ հայ վաճառականների թելադրանքով էին արուում։ Իրանի մեսաբսի արտահանման մենաշնորհը նրանց ձեռքում էր կեդրոնացուած եւ նրանք էին առաջին հերթին շահագրգռուած նոր, ապահով, ուստի եւ շահաւէտ ուղիներ գտնելու գործում։ Զուղահայ առեւտրական կապիտալի գործակալ Ֆիլիպ դի Զաղլիի գործունէութիւնը Մերձալթիկայում 1696 թ. եւ Լիվոնիայի, Կուրլանդիայի ու Սեկալինի դուքս Ֆր. Կազիմիրի հետ կնքուած պայմանագիրն այդ մասին են վկայում (տես՝ R. Gulbenkian, **Philippe et Zagly, Marchand Arménien de Julfa et l'Etablissement du Commerce Persan en Courlande en 1696,** «Revue des Etudes Arméniennes», tome VII Paris, 1970, pp. 361-426)։

20. Ե. Ս. Զեւակին, *նշ. աշխ.*, էջ 136։

ցող ճանապարհներն օգտագործել ցանկացող ուժերը՝ անգլիական եւ հոլանդական արեւելա-հնդկական կոմպանիաներն ու եւրոպական այլ երկրների առեւտրական շրջանակները։

1667 թ.-ի հայ-ռուսական առեւտրական պայմանագիրը ձեւակերպելիս, քննարկման առարկայ էր դառնալու այնպիսի կարեւոր հարց թէ ով է կանգնած ռուսական պետութեան առջեւ, որպէս պայմանագիրը կնքող կողմերից երկրորդը։ Հասկանալի է, որ այդ ոյժը Նոր Զուղայի կամ Սպահանի հայ վաճառականներն էին, որոնց լիազորութեամբ էին բանակցութիւններ վարում Ստեփան Ռոմոդամսկին եւ Գրիգոր Լուսիկովը։ Բայց ինչպէ՞ս կարող էին օտար մի երկրի (տուեալ դէպքում՝ Իրանի) մայրաքաղաքում բնակութիւն հաստատած ինչ-որ առեւտրականներ հանդէս գալ որպէս հզօր մի պետութեան հետ տնտեսական կարեւոր նշանակութիւն ունեցող երկարամեայ մի պայմանագրի ստորագրող կողմ։ Ինչպէս արդէն նշուել է, եւրոպական երկրներում ստեղծուած առեւտրական նշանաւոր ընկերութիւնները օտար երկրների տիրակալների հետ տնտեսական, ռազմական, նոյնիսկ քաղաքական պայմանագրեր կնքելու իրաւունք ունէին, որից եւ լայնօրէն օգտւում էին։ Ըստ այդմ, ռուսական կողմի համար Նոր Զուղայի հայկական համայնքի ներկայացուցիչները նոյնպէս, հանդէս էին գալիս որպէս առեւտրական մի կոմպանիայի լիազօր ներկայացուցիչներ, ուստի եւ պայմանագրի նախատեսումները կատարող կողմերից մէկը՝ հայկական կողմը, կոչւում էր նրանց կողմից «հայկական կոմպանիա», «Ջուղահայ կոմպանիա», եւ այլն։ Պարզելու համար, թէ պայմանագիրը ստորագրող հայ լիազօրների թիկունքում, եւրոպական կոմպանիաների օրինակով ստեղծուած, առեւտրական մի կազմակերպութի՞ւն էր կանգնած, թէ՝ Նոր Զուղայի հայկական համայնքը՝ ինքնավար իր մարմիններով, պէտք է ճեռնարկել խոջայական կապիտալի կազմակերպչական ձեւերի ուսումնասիրման կարեւոր գործին։

1667 թ.-ի պայմանագրի հետ առնչուող եւ Մոսկուայի Հին Փաստաթղթերի Կեդրոնական Պետական Արխիւում պահուող նիւթերի մէջ չի պահպանուած (կամ էլ դեռեւս չի յայտնաբերուած ու հրապարակուած) որեւէ փաստաթուղթ այն մասին, թէ ո՞ւմ լիազորութեամբ էին Մոսկուա ժամանել Նոր Զուղայի հայ վաճառականների ներկայացուցիչները՝ Ստեփան Ռոմոդամսկին եւ Գրիգոր Լուսիկովը։ Այս բացը լրացւում է 1671 թ.-ի Մարտին շարադրուած պարսկերէն այն եզակի կարեւորութիւն ներկայացնող փաստաթղթով, որն ուղղուած է ռուս թագաւորին եւ որով Նոր Զուղայի հայ մեծամեծերը լիազօրում են Գրիգոր Լուսիկովին, իրենց անունից բանակցութիւններ վարելու ռուս թագաւորի հետ. բացատրելու թէ ինչու հայերը չեն կատարել

Իրանի մեռաքսը Ռուսաստանի վրայով Եւրոպա արտահանելու իրենց պարտաւորութիւնը (որը բացատրում էին Ստեփան Ռազինի ապըստամբութեան հետեւանքով ստեղծուած ճանապարհների անապահովութեամբ) եւ նոր հաւատարիացումներ ստանալու առեւտուրը վերսկսելու պայմանների մասին։ Այդ փաստաթղթի մէջ ասուած է (քաղուածքը բերում է ռուսերէնից արուած մեր թարգմանութեամբ)։ «Ձեր յեղին ծառայ Բոգդանը, Սպահանի Ջուլֆա արուարձանի քալանթար, ընկեր աւագների («տովարիշչի ստարշինի») հետ միասին երկրպագում ենք եւ յայտնում որ [յանձնարարական] դրութեամբ Ռուսաստան ենք ուղարկում Գրիգորին (Լուսիկով), որպէսզի տեղեկութիւն ստանայ ճանապարհի ապահովութեան մասին եւ Ձերդ թագաւորական մեծութեան ողորմածութիւնը շարունակուի, եւ երբ ճանապարհը չարագործ կազակներից ազատ եւ ապահով լինի, եւ ամրութիւններ ու հանգրուաններ կառուցուեն, այդ ժամանակ հրահանգ տրուի պաշտօնակատար անձանց, որպէսզի վաճառական մարդիկ երթեւեկեն երկու ուղղութիւններով՝ ապրանքով եւ առանց ապրանքի, այնտեղ (Ռուսաստան) եւ նրա վրայով դերմանական (իմա՝ եւրոպական) երկրներ»[21]։

Գրիգոր Լուսիկովին տրուած այս լիազօրագրի տակ իրենց ստորագրութիւններն ու կնիքներն են դրել Ջուղայի մեծամեծերից 23 անձինք։ Ինչպէս եւ սպասելի էր, առաջին ստորագրութիւնը պատկանում է Ջուղայի վերոյիշեալ քալանթար Բոգդանին (Աստուածատուր անուան ռուսերէն համարժէքն է), որն ստորագրել է այսպէս։ (տալիս ենք ռուսերէն բառերը հայկական տառադարձութեամբ)։ «Վիրորնոյ չելովեկ Աստուածատուր Միրեթենց», այսինքն՝ «Ընտրովի անձ (իմա՝ քալանթար) Աստուածատուր Միրեթենց»։ Քալանթարից յետոյ ստորագրած անձանց՝ «ընկեր աւագների» մասին յիշատակութիւններ կան Գրիգոր Լուսիկովի բանակցութիւնների վերաբերեալ այլ փաստաթղթերի մէջ եւս։ Նրանք մէկ կոչուած են «հայկական կոմպանիայի դեկավար անձինք» («արմեանսկոյ կոմպանիի նաչալնիկ լիուդի»)[22], միւս դէպքում՝ «Սպահանում գտնուող հայերից լաւագոյնները» («արմեանսկիէ լուտչիէ լիուդի, կոտորիէ եստ վ Իս-

---

21· Հայ–Ռուսական ճարարերութիւնները ԺԷ· Դարում, էջ 90–91։

22· Այսպէս գրուած Պոսոլսկի Պրիկազում (Դիւանագիտական Ատեանում) կազմուած այն փաստաթղթի մէջ, որ վերաբերում է Գրիգոր Լուսիկովի ժամանման նպատակին եւ բանակցութիւններին։ Այստեղ թուարկուած են նաեւ նրա ներկայացրած պաշտօնական գրութիւնները· 1·— Շահ–Սուլէյմանի հրովարտակը, 2·— Գանձասարի կաթողիկոսի կոնդակը եւ 3·— մեզ հետաքրքրող փաստաթուղթը, որ կոչուած է «Հայկական կոմպանիայի դեկավար անձանց 21 (պէտք է լինէր 23)

պոգանի»)[23]։ Մէկ անգամ միայն, եւ այդ հենց Գրիգոր Լուսիկովի ինքնաձեռագրով՝ մեզ հասած է թագաւորին ուղղուած հայերէն խնդրագրի մէջ (գրուած 1671 թ.ի Յուլիսի 27–ին), նրանց ստորագրած եւ քննարկման ենթակայ փաստաթուղթը, որի լիազօրութեամբ ինքը ժամանել էր Մոսկուա, Լուսիկովը գրում է. «զարձեալ մեր քալանթարը, կուպանէն արդայ այն գըրէլ մեծ թագաւորին. համէնքըներին արգին յետկուսին ձեռն այն գըրէլ, մըրէլ, թէ ինչ օր Ֆազիրիս Մօսքօվայ մեծ թագաւորին ուղուրումն հառէչմէ չինելէ այմ, կամ էլ ինչ բայն յետ [կ]ու չինեմ, զարուլ այ, էս արդէս էլ բերում այմ մեծ թագաւորին զուլուղն»[24]։

Այսպիսով, ստացւում է, որ Գրիգոր Լուսիկովին ռուսական իշխանութիւնների հետ բանակցելու յանձնարարութեամբ Մոսկուա են ուղարկել նախ՝ Նոր Ջուղայի քալանթարը, ապա՝ 22 անձնաւորութիւններ, որոնք կոչուած են «ընկեր աւագներ», «ղեկավար անձինք», «հայերից լաւագոյնները», եւ, վերջապէս, «կուպանեքն. այսինքն կոմպանիաների (չեչտում ենք՝ կոմպանիաների եւ ոչ կոմպանիայի) ղեկավարները։

Ծանօթանանք ղեկավարների այդ ցանկին, ռուսական տառադարձութեամբ ներկայացուած եւ զգալի չափով աղաւաղուած հայերէն անուն–ազգանուններին՝ հնարաւորին չափով տալով իրենց նախնական կերպարները[25]։

(1) Աստուածատուր Միրեթէնց (Ջուղայի քալանթար)
(2) Պոտիկաղա Շահխաթէնց
(3) Աղափիրի Ջախաթունէնց

մարդկանց խնդրագիրը» (տես՝ *Հայ–Ռուսական Յարաբերութիւնները ԺԷ. Դարում*, էջ 83)։

23. Այս գրուած է Գանձասարի Պետրոս կաթողիկոսի կոնդակի մէջ, որով խնդրւում է Ալեքսէյ Միխայլովիչ ցարին բարեյաջող ընթացք տալ Գրիգոր Լուսիկովի բանակցութիւններին (տես՝ *Հայ–Ռուսական Յարաբերութիւնները ԺԷ. դարում*, էջ 92)։

24. *Հայ–Ռուսական Յարաբերութիւնները ԺԷ. Դարում*, էջ 72։ Մէջբերումը կատարում ենք ըստ լուսանկարի եւ ոչ՝ տպագրութեան, որի մէջ կան թերութիւններ։

25. Յովհաննէսի փոխարէն, օրինակ, ռուսերէնում գրուած է Գոռանէս, Գրիգորի փոխարէն՝ Գրիգորէյ, Ղուկասի փոխարէն՝ Գուկաս, Ջախաթունէնցը՝ Շախաթունենց, Քառասմանկացը՝ Կարաս Մանկաու, Փանոսէնցը՝ Պոնոսենց եւ այլն։ Ճըշգրտումը կատարելիս օգտագործել ենք նաեւ այլ աղբիւրներ, որտեղ յիշատակուած են նոյն անձինք կամ նոյն գերդաստանի այլ անդամներ։

(4) Մարգար Շահրիմանէնց
(5) Սաֆար Թուիչէնց
(6) Զաքար Գերաքէնց
(7) Մարտիրոս Աղէնց
(8) Աւետիք Գերաքէնց
(9) Վախտում Զուաիրի
(10) Գրիգոր Գիուղէնց
(11) Յովհաննէս Զեարկալանէնց
(12) Աղազար Բամալէնց [26]
(13) Ղուկաս Զամալէնց
(14) Գրիգոր Ամիրասաթէնց
(15) Աղափիրի Միրզարէզէնց
(16) Ոսկան Զահիրունց
(17) Մինաս Փանոսէնց
(18) Վալեանդիս Թաղարինց
(19) Յակոբջան Ուստաբաշի
(20) Ապով Լուսիկէնց
(21) Յովսէփ Սանէնց
(22) Կարապետ Բառասմանկանց
(23) Յովհաննէս Ասկանդարով[27]:

Զուղահայերի անունից այս լիազօրագիրը ստորագրող անձինք, առաջին հերթին ԺԷ. դարի 70-ական թուականներին հայկական այդ բնակավայրի տնտեսական կեանքում ամենից աւելի գործօն դեր կատարող առեւտրական դերդաստանների ղեկավարներն են՝ խոջայական դասի ընտրանին: Բալանթարից յետոյ լիազօրագիրն ստորագրողների ցանկը գլխաւորում է Պոտիկաղա Շահխասենցը: Շահխասենց կամ Սաֆրազեան կոչուող դերդաստանը դեռեւս Հին Զուղայում ամենաբարձր դիրքն էր գրաւել գիւղաքաղաքի կեանքում: Այս դերդաստանի աւագ՝ Խոջա Խաչիկը, Հին Զուղայի քալանթարն էր, որը Շահ-Աբբասից ստացել էր յատուկ հրովարտակ՝ ազատ առեւտուր անելու իրաւունքով, կառուցել էր երկու մեծ կարաւանատուն եւ այլն[28]: Բոնագաղթից յետոյ նորաշէն Զուղա հայաքաղաքի քալան-

---

26. Ռուսերէն գրուած է Կամաէլենց:

27. Հայ-Ռուսական Յարաբերութիւնները ԺԷ. Դարում, էջ 90-91:

Այստեղ է հետագայ ցանկերում թուարկուած անձանց հերթական համարանիշները դրուած են մեր կողմից:

28. Ս. Վ. Տէր-Աւետիսեան, Զուղա Քաղաքը, Թիֆլիս, 1937, էջ 32-37 (ռուսերէն):

թարներ են դառնում սրա որդիները, նախ՝ Խոջա Սարֆրազը (մահ. 1618 թ.), որին ժամանակակիցները նոյնիսկ «Հայոց թագաւորի» տեղ էին ընդունում[29], ապա նրա նշանաւոր եղբայր Խոջա Նազարը (մահ. 1636 թ.): Պատրիկազա Շահխասենցը Սարֆրազի նշանաւոր թոռներից է՝ Մելիքազայի որդի Խաչիկը, որը ժամանակակիցների կողմից ճանաչուած է աւելի իր Պատրիկազա մականունով[30]:

Լիազօրազրի երրորդ ստորագրողը Ազափիրի Զախաթունենցն է: Այս դերդաստանը եւս 1660-ական թուականներին եղել է Զուղայի ամենահարուստ ու նշանաւոր խոջայական դերդաստաններից: Սակայն նրանց մասին ուրիշ տուեալներ առայժմ յայտնի չեն:

Ստորագրութիւններից չորրորդը՝ Մարգար Շահրիմանենցինն է: Շահրիմանեանները Զուղայի կաթողիկէ հայերի պարագլուխն էին եւ հսկայական դեր էին կատարում Իրանի արտաքին առեւտրի ընդլայնումում: Մարգար Շահրիմանեանի եղբայր Զաքարն էր, որ հայրենական պայմանագիրը կնքելուց մի քանի տարի առաջ Ռուսաստան էր տարել նշանաւոր ադամանդեայ գահը եւ այլ թանկարժէք արեւելեան ապրանքներ: 1660 թ.-ի մի վաստակագրի մէջ ասուած է, որ Շահրիմանեանների բազմաթիւ գործակատարները «առեւտրական գործերով եւ ամէն տեսակէ թանկարժէք գործուածքներ ձեռք բերելու նպատակով մեկնում են բոլոր երկրները»[31]: Շահրիմանեանները Սպահանում ունէին յիսուն ծառայ եւ իրենց առեւտրական գործունէութիւնը

---

29. Նրա տապանաքարի վրայ գրուած է.

«Ա՛, իմ անմման խոջայ, որ էիր Հայոց թագաւոր,
Անումտ Սարֆրազ կոչի՝ սրընթաց զօրեղ դատաւոր...»

(տես՝ Հ. Տէր-Յովհաննեսեանց, *Պատմութիւն Նոր Զուղայու Որ յԱսպահան*, Ա. հատ., Նոր Զուղա, 1880, էջ 91):

30. Հ. Տէր-Յովհաննեսեանցը ձեռքի տակ վստահելի նիւթեր չունենալով, չի կարողացել վերականգնել Սարֆրազեան կամ Շահխասենց նշանաւոր գերդաստանի տոհմագրութիւնը: Այս թերին յաջողութեամբ լրացրել է Յ. Քիւրտեանը՝ *Զուղայեցի Խոջա Նազար եւ իր Ընտանիքը* (Պոսթըն, 1943), յօդուածով, որի մէջ օգտագործուած են տարբեր վայրերում պահուող հայերէն բազմաթիւ ձեռագրերի արժէքաւոր յիշատակարաններ: Յաւոք, նրան անծանօթ են եղել Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 201 ձեռագրի յիշատակարանները, որոնցից մէկում (գրուած 1660 թ.) կան ստոյգ տուեալներ այս գերդաստանի մասին: Պարզւում է, որ Խոջա Սարֆրազն ունեցել է Վաթան, Մելիքաղա, Ֆռանկիզուլ, Սուլթանում եւ Զալալ անունով որդիներ, իսկ Խոջա Նազարի որդիների անուններն են՝ Սարֆրազ, Էլիազ եւ Հայկազ (Մատենադարան, ձեռ. թիւ 201, էջ 612բ):

31. *Հայ-Ռուսական Յարաբերութիւնները ԺԷ. Դարում*, էջ 25:

ծաւալում էին, օգտագործելով հարիւր գործակատարներ[32]։

Յանկի բոլոր քսաներեք ստորագրողների ու Նոր Զուղայի ազնտեսական կեանքում նրանց կատարած դերի բացայայտումը մեծ դժուարութիւնների հետ է կապուած։ Տուեալ յօդուածով մեր նպատակից դուրս համարելով այդ դժուարին խնդիրը, կանգ կ'առնենք միայն մի քանիսի վրայ եւս։

Ստորագրողներից 6-րդը եւ 8-րդը հանդիսանում են Գերաքենց դերդաստանի երկու տարբեր ճիւղերի ներկայացուցիչները, որոնք հանդէս են եկել նաեւ Միրման-Գերաք աղգանունով եւ մեծ դեր են կատարել Վենետիկում, Լիվոռնոյում եւ այլ վայրերում։ Հ. Տէր-Յովհաննեանցը, անդրադառնալով դրանցից մէկի գործունէութեանը, ասում է, որ նրա «տուրեւառութեան բաղուկ ձգեալ կայր յԵւրոպայ եւ ի կողմն Ասորախանայ եւ Գիլանայ»։ Այստեղ ստորագրողներից Խոջա Զաքարը եւ նրա Ըմպրումաղա եղբայրը, նոյնպէս բազմաթիւ գործակատարներ ունէին։ 1682 թ.-ին նրանք վարկաւորեցին Յովհաննէս Տէր-Դաւթեան վաճառականին, որն իր աղաների ուրիշ գործակատարների հետ միասին, առեւտուր էր անում Հնդկաստանում, Նեբալում եւ Թիպեթում[33]։

Ամիրասաթենց Գրիգորի հայ կաթողիկէ դերդաստանը սերտօրէն շաղկապուած էր Շահրիմանեանների հետ։ Սրա թոռներից մէկը, որ կրում էր պապի անունը, ԺԸ. դարի 40-ական թուականներին հաստատուել էր Մոսկուայում եւ զբաղուած էր թանկագին քարերի առեւտրով[34]։

Ղուկաս Զամալենցի մերձաւոր ազգականները ԺԷ. դարի վերջին հսկայական հարստութեան տէր էին դարձել։ Նշանաւոր էր յատկապէս Յովհաննէս Զամալենցի որդի Յովհաննէսը, որի միջոցներով 1701 թ.-ին կառուցուեց Ամենափրկիչ վանքի զանգակատունը։ Այդ մասին փորագրուած արձանագրութեան մէջ այդ խոջան մեծարուած է. «զոյիւք եւ ընչիւք իշխանաշուք, ազնուատոհմ եւ պերճապատիւ պարոնաց պարոն» տիտղոսով[35]։

Կարապետ Քառասմանկանցի դերդաստանը, նոյնպէս, յայտնի է եղել իր ճոխութեամբ ու հարստութեամբ։ Ըստ աւանդութեան, այդ

---

32. R. Gulbenkian, նշ. աշխ., էջ 366, վկայակոչում է **A Chronicle of the Carmelites in Persia,** London, 1939, vol. II, p. 451.

33. Լ. Խաչիկեան, Յովհաննէս Զուղայեցու Հաշուետումարը, **«Armeniaca», Mélanges d'Etudes Arméniennes,** Վենետիկ, 1969, էջ 244-252։

34. Մատենադարան, ձեռ. թիւ 6240, էջ 39ա։

35. Հ. Տէր-Յովհաննեանց, նշ. աշխ., Բ. հատ., էջ 5։

ազգանունը ծագել է նրանց յարկի տակ միաժամանակ քառասուն մանկանց առկայութեամբ[36]։

Նշանաւոր են եղել նաեւ Լուսիկենց տան անդամները։ Գրիգոր Լուսիկենցը հայ-ռուսական պայմանագիրը Ջուղայեցիների յանձնարարութեամբ ստորագրողներից մէկն էր եւ բանակցութիւնների երկրորդ փուլի միակ վարողը։ 1692 թ.-ին, նոյն դերդաստանի երկու անդամներին՝ Մարութին եւ Եսայուն, հանդիպում ենք Կալկաթայում[37], իսկ ԺԸ. դարի 40-ական թուականներին Ամստերդամում է գտնւում ոմն Գրիգոր որդի Յովհաննէսի, որի ազգանունն է Ապովենց։ Մեծ հաւանականութեամբ, սա Ապով Լուսիկենցի թոռներից է, ուստի այդ դերդաստանը եւս ճիւղաւորումներ է տուել ու տարածուել՝ Եւրոպայի ու Ասիայի առեւտրական կեդրոններում[38]։

Այսպիսով, պարզ է դառնում, որ Ռուսաստան (նաեւ այլ երկրներ) Ջուղահայերի կողմից առաքուող բանադնացների թիկունքում կանգնած էին այդ հայաքաղաքի խոշորագոյն առեւտրական դերդաստանների, այլ խօսքով՝ առեւտրական կոմպանիաների ղեկավար դէմքերը, խոշոյական կապիտալի աւագ ներկայացուցիչները։ Եւ չկայ թէկուզ մի ակնարկ այն մասին, որ նրանք միաւորուած են եղել մի հսկայ առեւտրական կազմակերպութեան մէջ ու հանդէս եկել որպէս եւրոպական տիպի, բաժնետիրական սկզբունքներով կեանքի կոչուած առեւտրական ընկերութեան ներկայացուցիչներ։

Անդրադառնալով միջնադարեան Եւրոպայի առեւտրական ընկերութիւնների կառուցուածքի հարցերին, Ֆ. Էնգելսը յանդել է այն եզրակացութեան, որ նրանք կեանքի են կոչուել համայնքի (մարկայի) ազդեցութեամբ, ժառանգելով նրա աւանդական ձեւերը[39]։ Այս եզրակացութիւնը շատ խոստումնալից է նաեւ արեւելեան երկրների առեւտրական ընակավայրերի՝ քաղաքների եւ գիւղաքաղաքների, վարչական մարմինների ու տնտեսական կեանքի ղեկավարման օղակների ուսումնասիրութեան համար։ Անդրադառնալով հայկական միջավայրին կարելի է եզրակացնել, որ միջազգային ապրանքափոխանակութեան հետ առընչուած բոլոր հայկական քաղաք-գիւղա-

---

36. Հ. Տէր-Յովհաննէսեանց, նշ. աշխ., Ա. հատ., էջ 149։

37. Յովհաննէս Տէր Դաւթեանի հաշուեմատեան (ձեռագիրը պահպանւում է Լիզպոնի ազգային գրադարանում 7970 համարի տակ։ Մատենադարանում կայ այդ հաշուեմատեանի լուսանկար պատճէնը)։

38. Մատենադարան, ձեռ. թիւ 6240։

39. Ն. Պ. Սոկոլով, Զինոյ Սաղցատոյ. Վենետիկի Տնտեսական Պատմութեան Ուրուագծեր, Պադուայա, 1954, «Սրեդնիէ վեկա» ժ., 1957, էջ 263 (ռուսերէն)։

քաղաքների նմանութեամբ, Նոր Ջուղան եւս իր ներքին գործերում ինքնավար էր, եւ նոյնիսկ այնքան, որ որոշ եւրոպացիներ այն համարում էին «փոքրիկ հանրապետութիւն»[40]:

Այդպէս էր Ջուղան նաեւ մեծ բռնադաղթից առաջ, Արաքսի ափին՝ իր հին ընօրրանում: 1595 թ.-ին Հին Ջուղայում ընդօրինակուած մի ճառընտիրի յիշատակարանի մէջ գրուած է. «Եւ արդ, եղեւ լրումն եւ աւարտ կատարման այսմ աստուածախօս տառիս ի մայրաքաղաքն Ջուղայ, որ է հանդիստ եւ պարծանք Հայկազեան տոհմիս»: Ադաչելով արարչից չէն պահել իրենց այդ «մայրաքաղաքը» գրիչը յայտնում է, որ ձեռագրի ընդօրինակման աշխատանքները կատարել է «ի մելիքութեան Ջուղայու պարոն Սուլթանվալուն»[41]:

Բազմաթիւ վաստակը կան այն մասին, որ մելիքութեան պաշտօնը ընտրովի է եղել: Զաքարիա Ագուլեցին, օրինակ, իր օրագրութեան շարադրանքի ընթացքում միշտ էլ նշումներ է արել այն մասին, թէ տուեալ նիւթը գրանցելիս ով է եղել իր հայրենի գիւղաքաղաք Ագուլիսի մելիքը[42]: Այդ պաշտօնի ընտրովի լինելը պարզւում է բազմաթիւ սկզբնաղբիւրների վկայութեամբ: Նոյն Զաքարիան 1673 թ. մի գրանցման մէջ յայտնում է, որ այդ տարի Ագուլիսն ունեցել է երկու մելիք, որովհետեւ վէճ է առաջացել գիւղաքաղաքի երկու թաղերի միջեւ: Ներքին թաղեցիները առաջադրել են Բուրդոնց Ալեքսանը, իսկ վերին թաղեցիները՝ Օվիի թեկնածութիւնը. «Այսպէս Բ բաժանեցան,– գրում է Զաքարիան,– շատ աղմուկ լինէր մէջն»[43]: Գիւղական տանուտէր-մելիքներն էլ էին ընտրովի: Տեղեկութիւն ունենք այն մասին, թէ ինչպէս քանաքեռցիները միաբանութեամբ տանու-

---

40. Դէ-Շինոն, որ Նոր Ջուղայում եղել է ԺԷ. դարի կէսերին, գրել է, օրինակ, այսպիսի տողեր. «Թագաւորը այդ փոքրիկ հանրապետութեան կառավարութիւնը տուել էր հայ Խոջա Սաֆարին, իսկ յետոյ էլ նրա եղբօրը, նրանց այժմեան կառավարչի հօրը՝ Խոջա Նազարին» (տես՝ John Garswell, **New Julfa, Armenian Churches and Other Buildings**, Oxford, 1968, p. 78).

41. Ս. Տէր-Աւետիսեան, *Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքի*, Վիեննա, 1970, էջ 271:

42. *Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, Երեւան, 1938: Բերեմ մի քանի գրանցում. «Ցամի Ռ.ԺԳ (1664 թ.) ...Ագուլաց մէլիքն՝ Բաղալիջ Շահնազարն էր» (էջ 70), «Թուին Ռ.ԺԷ (1668 թ.) Ագուլաց մէլիքն էր մէլիք-Մանուէլն» (էջ 78), «Թուին Ռ.ԺԸ (1669 թ.) ... այս տարուս Ագուլիս մէլիք չունէր...» (էջ 80), «Թուին Ռ.ԺԻ (1671 թ.) .... այսմ ամի Ագուլաց մէլիքն էր Բուրդանց Սարգաւաքի որդի Ալեքսանն» (էջ 112) եւ այլն:

43. Նոյնը, էջ 119:

տէր են ընտրել իրենց համալիւղացի ոմն Ամիրջանի. «Միաբանեցան ամենայն դեղականքն եւ ասեն, եկայք զկցուք զսա տանուտէր, թեւեւս սանձեսցուք զհպարտութիւն զորա։ Եւ արարին այնպէս եւ եղին զնա տանուտէր Քանաքեռոյ», – գրել է լաւատեղեակ պատմիչը[44]։ Ըստ որոշ տուեալների՝ քաղաքատիպ վայրերում, համայնքի կողմից ընտրուած մելիքից բացի, շահի կողմից ուղարկւում էր յատուկ պետական պաշտօնեայ՝ քալանթար, որ պետութեան ներկայացուցիչն էր այդ վայրում եւ պէտք է ապահովեր պետական հարկերի գանձումը եւ այլն։ Սակայն, մեծ մասամբ, հայկական առեւտրական կեդրոններում քալանթարի պաշտօնը շահական յատուկ հրովարտակով յանձնւում էր համայնքի կողմից ընտրուած մելիքին։ Ագուլիսում մելիք, միաժամանակ եւ քալանթար էր ընտրուած Մելիք Շահնազարը։ 1678 թ.-ին Ագուլիսի ու Դաշտի բնակիչները յատուկ համախօսականով Սպահան ուղարկեցին իրենց նորընտիր մելիք Օվուն, որպէսզի նրան եւս տրուի քալանթարութեան պաշտօնը[45]։ Մելիքի ու քալանթարի պաշտօնը միաւորուած էր նաեւ Ջուղայում։ Բռնադատիից առաջ այնտեղ քալանթարի պաշտօնը դրաւում էր Շահիխասենց դերդաստանից՝ վերոյիշեալ Խոջա Խաչիկը, որը Շահ-Աբբասից 1580 թ.-ին ստացել էր յատուկ հրովարտակ՝ ազատ առեւտուր անելու իրաւունքով։ Պահպանուել է նրա խաչքար-մահարձանը, որի վրայ փորագրուած է. «Սուրբ խաչս բարեխաւս առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ Խաւջա Խաչիկին»[46]։ Նոր Ջուղայի հիմնադրումից յետոյ, հերթականութեամբ, նորաշէն այդ հայաքաղաքի քալանթարներ են դառնում նրա որդիները՝ նախ Խոջա Սաֆրազը, ապա նրա նշանաւոր եղբայրը՝ Նազարը։ Սաֆրազեան այդ հզօր խոջաներից յետոյ, որոնք մեծ կշիռ ունէին Իրանի արքունիքում, եւ երեք-չորս սերունդ շարունակ ժառանգական սեփականութիւն էին դարձրել քաղաքի ղեկավար պաշտօնը, համայնքի կեանքում մեծ կշիռ ունեցող խոջաների կամքով եւ ընտրութեամբ քալանթար են դառնում ուրիշ դերդաստանների ներկայացուցիչներ, ունենալով հաւանաբար նաեւ անձնական բարեմասնութիւններ եւ կազմակերպչական ընդունակութիւններ։

Գրիգոր Լուսիկովին տրուած վերոյիշեալ լիազօրագիրի ստո-

---

44. Զաքարիա Սարկաւագի Պատմագրութիւն, Բ. հտր., Վաղարշապատ, 1870, էջ 1-2։

45. Զաքարիա Ագուլեցին յայտնում է, որ 1678 թ.-ին «Բանգի առաջմէ ուրիշ քալանթար Աֆուլաց ու Դաշտին դախլ չէն անիլ, ով որ Աֆուլաց ու Դաշտին մէլիք լինի, որ քալանթար էլ նայ լինի» (տես՝ Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը, էջ 139)։

46. Ս. Վ. Տէր-Աւետիսեան, Ջուղա քաղաքը, էջ 32, 37 (ռուսերէն)։

բաղրուած խոջաների ցանկը, ինչպէս արդէն նշել ենք, իր անուն-ազգանունով բացել է 1671 թ.-ի քալանթարը՝ «ընտրովի անձ» («վիբոռնայ չելովեկ») Աստուածատուր Միրեթենցը, ազգանունից դատելով՝ ոչ շատ անուանի ընտանիքի ներկայացուցիչ: Քննարկուող ցանկի մէջ իր տեղն է գրաւել նաեւ քաղաքի արհեստաւորական դասի ներկայացուցիչը՝ ուստարաշի Յակոբջանը: Յայտնի է, որ Մերձաւոր ու Միջին Արեւելքի միջնադարեան քաղաքների սոցիալ-տնտեսական կեանքում զգալի դեր էին կատարում ուստարաշու ընտրովի պաշտօնը գրաւող անձինք, որոնք պետական մարմինների առջեւ հանդէս էին գալիս, որպէս տուեալ քաղաքի արհեստաւորական համքարութիւնների ղեկավարներ: Կար նաեւ գլխաւոր ուստարաշու պաշտօն: Այդպէս էր կոչւում բոլոր համքարութիւնների կողմից ընտրուած ղեկավար պաշտօնեան, որի գլխաւորութեամբ և մի էին գալիս տարբեր մասնագիտութեան արհեստաւորական համքարութիւնների ղեկավարները: Նրանք քննարկում էին ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր, հարթում միմեանց միջեւ ծագած վէճերն ու անհամաձայնութիւնները, հաւանաբար մասնակցելով նաեւ հարկերի ու տուրքերի մասնատրման եւ գանձման աշխատանքներին[47]:

Այսպիսով, շատ որոշակի են Նոր Ջուղայի համայնքի ղեկավար քսաներեք անձերից երկուսի՝ քալանթարի եւ ուստարաշու պաշտօնական հանգամանքները: Սոցիալական իրենց դիրքով մեզ համար արդէն պարզ է, որ միւս քսանմէկ ստորագրողները, բոլորն էլ, Նոր Ջուղայի մեծահարուստ խոջայական դերդաստանների ներկայացուցիչներ էին, իսկ թէ հայաքաղաքի ինքնավարութեան օղակներում գրաւած իրենց պաշտօնով ովքեր էին նրանք, կարելի է պարզել ուսումնասիրելով Նոր Ջուղայի ստեղծման պատմութիւնն ու թաղային համակարգը:

***

Արեւելեան Հայաստանի չէն նահանգներն անապատ դարձնելու իր ծրագիրն իրագործելիս, Իրանի դաժան տիրակալ Շահ-Աբբասը յատուկ պայմաններ էր ստեղծել Ջուղայեցի եւ, ընդհանրապէս, քաղաքաբնակ հայերի համար: Նրանց փոխադրելով իր նոր մայրաքաղաքը՝ Սպահան, յատուկ հողամաս էր յատկացրել հին Ջուղայեցիներին, որոնք այնտեղ կառուցեցին իրենց նոր գիւղաքաղաքը, պահ-

47. Ս. Ա. Եղիազարով, *Ուսումնասիրութիւններ Անդրկովկասում գոյութիւն ունեցող Հաստատութիւնների պատմութեան*, մասն Բ., *Քաղաքային համքարութիւններ*, կազան, 1891, էջ 267–328 (ռուսերէն):

պանելով բնօրրանի անունը՝ Զուղա։ Ժէ. դ. 50-ական թուականներին այդ հայաքաղաքն ընդարձակուեց կլոց կառուցուած նոր թաղամասերով, որտեղ բնակութիւն հաստատեցին նախապէս Սպահանի արուարձաններում տեղաւորուած երեւանցիները, դաշտեցիները, դասկեցիները, թաւրիզեցիները եւ ուրիշներ։ Սրանք, սակայն, վարչական առումով չձուլուեցին Զուղայի հետ, չենթարկուեցին Նոր Զուղայի ինքնավար մարմիններին, այլ երկար տասնամեակներ դոյատեւեցին որպէս ինքնուրոյն համայնքներ[48]։ Իսկ Նոր Զուղան կառուցուեց որոշակի մի նախագծով՝ գլխաւոր պողոտայով ու նրան հատող փողոց-թաղամասերով։ Գլխաւոր այդ պողոտան, որն ուղղագիծ ձգւում էր արեւելքից արեւմուտք (ունէր 3276 քայլ երկարութիւն, 16 քայլ լայնութիւն), քաղաքի նշանաւոր քալանթար Խոջա Նազարի անունով կոչուել է Նազարի խիավան։ Այս պողոտայի վրայ էին դտնւում բաղմաթիւ վաճառատներն ու արհեստանոցները[49]։ Պողոտան բաժանուած էր երկու հատուածի, որի արեւմտեան կողմում՝ կոչուած Սաֆրազեանց դուռ, բնակութիւն էին հաստատել հայ առաքելական եկեղեցու դաւանանք ունեցող (լուսաւորչական) հայերը, իսկ արեւելեան կողմը՝ Շահրիմանեանց դուռ կոչուող, գարձել էր հռոմէադաւան (կաթողիկէ) հայերի քաղաքամաս։ Զանդարուդ դեռից դէպի հարաւ ձգուած են եղել տասը ուղղագիծ ու լայնարձակ փողոցներ, որոնք հատուելով Նազարի խիավանի հետ, բաժանուել են քսան ինքնուրոյն հատուածների (տասական հատուածներ՝ աջ ու ձախ մա-

---

48. Այս առումով հետաքրքրական է 1702 թ. մի ձեռագրի յիշատակարանը. «Աւարտեցաւ սուրբ գիրքս, որ կոչի Ագաթանգեղոս, — գրուած է այնտեղ,— ի քաղաքն Շօշ, որ է Ըսպահան, ի գիւղն Նոր Երեւան, ի դուռն սուրբ Ամենափրկչին, ձեռամբ փծուն եւ ախմար գրչիս՝ Խաչատուր իրիցի» (տես՝ Օ. Եգանեան, *Ցուցակ Ձեռագրաց Նիւ-Եորքարնակ Ց. Հաղարեանի*, ձեռ. թիւ 60, անտիպ)։

Սկզբնաղբիւրներում յաճախ հանդիպում են ջուղայեցի տարբեր անձնաւորութիւնների, որոնք կոչւում են երեւանցի (օրինակ՝ Ոսկան Երեւանցի), դաշտեցի (օրինակ՝ Ստեփանոս Դաշտեցի) եւ այլն, որոնք սակայն ոչ բուն երեւանցի են եւ ոչ էլ դաշտեցի (Ագուլիսի երկու թաղերից մէկն է), այլ Նոր Զուղային առընթեր կառուցուած համանուն բնակավայրերի ծնունդ։

49. Զուղահայ աշուղ Բաղեր Օղլին այսպիսի տողեր ունի Նազարի խիավանի մասին.

Բասա (ուղղագիծ) այ խէրէվան (պողոտան),
Դուքանն փաֆիզ (մաֆուր) այ բազարն Զուղու,
Դուքանն փաֆիզ այ, մարդիկ սաֆաթով (բարեշնորհութեամբ),
Աղինին նստոտած ոսկէ սահաթով։

(տես՝ Հ. Տէր-Յովհաննեանց, *Նչ. աշխ.*, Ա. հտր., էջ 172)։

սերում)։ Այդ վաղոցներից իւրաքանչիւրը, որն ունեցել է իր մուտքդարբասը, դիտուել է որպէս ինքնուրոյն մի թաղամաս, կոչուելով ականաւոր բնակիչներից մէկի անունով՝ այս կամ այն անձի «տասնակ»։ Հայկական միջնադարեան գիւղական համայնքից ժառանգուած ու դարաւոր աւանդոյթ ունեցող տասնակային այս համակարգը, ըստ Նոր Ջուղայի հետ առընչուող վաստակների, ընկած է եղել նաեւ հայկական քաղաքների կազմակերպչական կառուցուածքի հիմքում։ Գիւղական տասնակների գլխաւոր խնդիրն է եղել համայնապատկան հողի ու ջրի տնօրինումը, ինչպէս նաեւ պետական հարկերի ու տուրքերի բաշխումը տասնակի մէջ ընդգրկուած ընտանիքների վրայ եւ այլն։

«Տասնակաւագները» (ստորեւ կը տեսնենք, որ Նոր Ջուղայի վաստաթղթերում այդպէս են անուանուած տասնակների ղեկավարները) իրենց մշտական տեղն են ունեցել համայնքի ղեկավարութեան մէջ, տանուտէրից (գեղջաւագից) յետոյ եղել են ամենահեղինակաւոր եւ վարչական իրաւունքներով օժտուած անձինք[50]։ Թաղապետ–տասնակաւագի պաշտօնը եւս ընտրովի է եղել։ Այն միշտ էլ գրաւել են տուեալ թաղի մեծահարուստ դերդաստանների ներկայացուցիչները, համապատասխան օժանդակութիւն ստանալով համայնքի բոլոր դրծերը տնօրինող աշխարհիկ ու հոգեւոր վերնախաւի կողմից։ Այս մասին գրել է Զաքարիա Ադուլեցին, «տասնակաւագ» եղբի փոխարէն գործածելով դրան համարժէք «տանուտէր», ինչպէս եւ թուրքերէն «աղսախկալ» եղբերը։ Նա յայտնում է, որ երկար տարիներ Ադուլիսի Դաշտ թաղամասի տանուտէր կամ աղսախկալ է եղել մեծատուն մի անձնաւորութիւն՝ մղդսի Մելքումը, Թոմա Առաքելի վանքի վանահօր կուսակիցն ու թեկնածուն։ Դաշտեցիները, հակառակ վանահօր ցանկութեան, այդ պաշտօնից զրկել են Մելքումին, նրա փոխարէն տանուտէր ընտրելով ոմն Տէր Մարգարի որդի Ազարի։ Այս կապակցութեամբ հակառակ կողմերի միջեւ երկարատեւ պայքար է ծաւալուել[51]։

50· Ս· Ա· Եղիազարով, *Ուսումնասիրութիւններ Անդրկովկասում գոյութիւն ունեցող հիմնարկութիւնների պատմութեան*, մասն Ա·, *Գիւղական համայնք*, Կազան, 1889, էջ 110–120 (ռուսերէն)։ Լ· Ա· Խանլարեան, *Նախառեֆորմեան Շըրջանի* (*ԺԹ· դ· 40–60–ական թթ·*) *Հայկական գիւղի բնութագրման մասին* «Իստորիչեսկիէ զապիսկի» թիւ 58, 1956, էջ 162 (ռուսերէն)։

51· *Զաքարիա Ադուլեցու Օրագրութիւնը*, էջ 77–78։ Համայնքի անդամների եւ ընտրովի ղեկավարների (մելիք եւ տանուտէր) միջեւ առաջացած տարաձայնութիւնների ու պայքարի, ինչպէս եւ նրանցից հաշիւ պահանջելու եւ, նոյնիսկ, զանցառուին պաշտօնազուրկ անելու եւ պատժելու իրաւունքի մասին կարեւոր տեղե-

Նոր Ջուղայի «տասնակաւագ»–թաղապետերի մասին ակնարկութիւններ կան նաեւ եւրոպական աղբիւրներում։ Նրանցից մէկում, օրինակ, գրուած է որ «Նրանք (իմա՝ նոր–Ջուղայեցիները) ունեն իրենց քալանթարը կամ քաղաքապետը եւ իրենց քեռպետները կամ թաղապետերը, որոնք իրաւունք ունեն դատելու բոլոր հասարակ վէճերը։ Աւելի կարեւոր հարցերը ենթակայ են թաղաւորի կամ պետական խորհրդի իրաւասութեան, իսկ որոշումներն ի կատար են ածւում քաղաքապետի կամ թաղապետերի կողմից»[52]։

Համադրելով մեզ հասած գրաւոր ու աղբագրական տուեալները, կարող ենք ստուերագծել թաղապետերի գործունէութեան հիմնական բնագաւառները։ Նրանք առաջին հերթին, հայաքաղաքի ինքնավարութեան ղեկավար մարմնի մնայուն անդամներն են եղել եւ, բնականաբար, մասնակցել են բոլոր այն ժողովներին, որոնցում քննարկուել են քաղաքի ներքին կեանքին վերաբերող կարեւոր հարցերը։ Թաղի բնակիչների միջեւ առաջացած վէճերն ու անհամաձայնութիւնները հարթուել են, առաջին հերթին, «տասնակաւագների» որոշումներով[53]։ Նրանց գլխաւոր պարտականութիւններից մէկն էլ պետական հարկերի, ինչպէս եւ տարբեր առիթներով տէրերի կողմից բռնաղանձուող արտակարգ տուրքերի թաղին բաժին ընկած պահանջարկի բաշխումն է եղել թաղի բնակիչ գերդաստանների վրայ՝ ըստ նրանց նիւթական հնարաւորութիւնների։ Այդ նպատակով զումարում էին թաղային ժողովներ, որոնք յաճախ բուռն վէճերի ու հակամարտութիւնների ասպարէզ էին դառնում։ Մեծահարուստ եւ ազդեցիկ թաղականները ամէն ջանք գործադրում էին իրենց վրայ դրուած հարկը գեղչելու համար[54]։ Այն մասին, որ հենց «տասնակաւագներն» էին հաւաքում ու քալանթարի միջոցով պետական գանձատան մուծում հարկերը, պահպանուել են նաեւ մի քանի ստացագրեր, գրուած 1743–1745 թթ. տասնակներից մէկի (չի նշուած որ տասնակի) աւագ՝ ոմն Յովհաննէսի կողմից։ Այդ վաւերագրերով նա հաւաստում

կութիւններ կան Զաքարիա սարկաւագի եւ Զաքարիա Ագուլեցու վերոյիշեալ գրուածքների մէջ (տես՝ *Զաքարիա Սարկաւագի Պատմագրութիւն*, Բ. հտր., էջ 2։ *Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւն*, էջ 153)։

52. Cornelis de Bruyn, **Travels into Moscovy, Persia and Part of the East Indies,** London, 1937, p. 225 (տես՝ John Garswell, *նշ. աշխ.*, էջ 78)։

53. Այս մասին բացի Cornelis de Bruyn–ի վերը վկայակոչուած տուեալից, ուշադրութեան արժանի նիւթեր կան նաեւ հետեւեալ աշխատութեան մէջ. Պօղոս Պետրոսեան, *Նոր Ջուղայի Նախկին Բնակիչների կեանքը*, Նոր Ջուղայ 1974։

54. Նոյնը, էջ 17–19։

է, որ քաղաքաթաղ Նազարի զերդաստանից կամ նրա երեք որդիներից ստացել է պահանջուող այս կամ այն հարկը՝ «մալը» եւ «մութամիշը»[55]:

Գիշերները թաղերի («տասնակների») դարբասները փակւում էին եւ թաղականներից, որոշակի հերթականութեամբ, գիշերային պահապանների խմբեր էին կազմւում, որոնց պարտականութիւնն էր մինչեւ լուսաբաց շրջել թաղում եւ կանխել ամէն մի պատահար եւ զողութիւն, ենթարկուելով զեկավար կարգուած անձի հրահանգներին: Պահակային այս ծառայութիւնը շատ աւելի կարեւոր էր դառնում, երբ Իրանի մայրաքաղաքը դառնում էր պատերազմական դէպքերի ասպարէզ[56]: Տասնակաւագի պարտականութիւնների մէջ էր մտնում նաեւ թաղի պաշտպանութեան հետ կապուած կազմակերպչական աշխատանքների հսկողութիւնը:

Նոր Զուղայի բոլոր թաղերն, անխտիր, իրենց ներսում ունէին լաւ մշակուած պարտէզներ, որի մասին տուեալներ կան սկզբնաղբիւրներում: Հասկանալի է, որ քաղաքի ինքնավար մարմինների կարեւոր պարտականութիւնների շարքում առաջնակարգ տեղ էին գրաւում նաեւ ջրամատակարարման գործի կազմակերպման եւ անխափան աշխատանքի ապահովման հետ առընչուող հոգսերը եւ այլն:

Նոր Զուղայի տնտեսական կեանքի զարկերակը շաղկապուած էր արտաքին առեւտրի հետ: Նշանաւոր խոջայական զերդաստանները, իրենց մեծաքանակ գործակատարների հետ միասին, առեւտուր էին անում ասիական ու եւրոպական մայրաքաղաքների շատ երկրների հետ: Ուստի, նրանց համար ամենօրեայ մտահոգութեան առարկայ պէտք է լինէին Իրանի մայրաքաղաքից դէպի օտար երկրներ ձգուող ցամաքային ու ծովային ճանապարհների ապահովութեան

55· Պահպանուել են այդպիսի 5 ստացագրեր Բրիտանական Գրադարանի Lansdowne 1047 եւ 1048 համարների տակ պահուող փաստաթղթերի մէջ (Մատենադարանում պահւում են դրանց լուսանկարները): Մէջ են բերում դրանցից երկուսը· «Թիւն վտոբ Աճ.Հ.Թ (1744)-էն ֆալանթար Նազարէնց մութամիշն Գ (թուման) Բ.Ռ դիան, որ կէսն այ Ա (թուման) Զ.Ռ դիան, խասավ ինձ՝ տասնայկավաք Յովհաննիսիս» (Բրիտ· Գրադ· թիւ 1048, էջ 29): «Թիւն փոբ Աճ.Լ· (1745) ֆալանթար Նազարին երեք տղին սարշմարն մալն այ Թ.Ռ դիան, խասավ ինձ՝ տասնայկավաք Յովանիսիս՝ (Բրիտ· Գրադ·, թիւ 1048, էջ 30):

56· «Մին ճոթածախ գոլվաքաւորի տունն մտին Զեզուիտի վանքին կուշտ՝ Լ (30) ձիաւոր, Ժ-Ի (10-20) հետեւակ, թրով տուին, ճոթածախին փորն ճղեցին, մաքլաղ ապրանքն տարան··· Զուղեցիք ամենայն գիշերն իրեանց տներն կու պահեն, քոն չեն լիներ, այսպէս իմանաս», — գրել է Եղիան իր նամակներից մէկում (տես՝ *Եղիա Կարնեցու Դիւանը*, Երեւան, 1968, էջ 30):

հետ առընչուող բարդ հարցերը, օտար երկրներից Արեւելք ներթափանցող առեւտրական ընկերութիւնների նկատմամբ իրենց վերաբերմունքի ճշգրտումը եւ այլն։ Այս կարգի հարցերը եւս, հաւանաբար, լուծւում էին քալանթարի ղլխաւորութեամբ եւ տասնակաւագների մասնակցութեամբ պարբերաբար գումարուող ժողովներում։

Ժէ. դարի կէսերին Հայաստանում երկար տարիներ քարոզչական գործունէութիւն ծաւալած կաթողիկէ միսիոնար Փիրոմալլին իր գրութիւնների մէջ չեչտել է այն մեծ ազդեցութիւնը, որ ունեցել են Ջուղայեցիները հայ եկեղեցու կեանքում եւ մշակութային գործունէութեան բնագաւառներում։ Նրանք, ըստ Փիրոմալլիի, «ի վիճակի են ըստ իրենց ցանկութեան պաշտօնազրկել ոեւէ վարդապետի, եպիսկոպոսի կամ, նոյնիսկ, կաթողիկոսի»[57]։ Եւ իրօք, պատմական աղբիւրներում բազմաթիւ փաստեր կան, որոնք հաստատում են այս տեղեկութիւնը։ Առանց ասելու էլ հասկանալի է, որ Ջուղահայ համայնքի ղեկավար մարմինների գիտութեամբ ու հրահանգներով էին լուծւում նաեւ հայ մշակոյթի ու եկեղեցու հետ առընչուող եւ համահայկական նշանակութիւն ունեցող շատ հարցեր։

Այսպիսով, Նոր Ջուղայի տասնակաւագները, իւրաքանչիւրը հանդէս գալով իր տասնակի անունից միասնաբար էին քալանթարի շուրջ՝ լուծելու համար քաղաքի առջեւ ծառացող բոլոր կարեւոր խնդիրները։

Ըստ Հ. Տէր-Յովհանեանցի ձեռքի տակ եղած շատ կարեւոր փաստաթղթերի, որոնք այսօր էլ պահւում են Ջուղայի Ամենափրկիչ վանքի դարաններում, Նոր Ջուղան բաղկացած է եղել քսան տասնակներից։ Նրանք ունեցել են իրենց անունները, կապուած տասնակաւագների անուանց հետ, որոնք, սակայն, փոփոխուել են, երբ որեւէ տասնակի ղեկավարութիւնը այս կամ այն խոջայական ղերդաստանի ներկայացուցիչից անցել է մէկ ուրիշի ձեռքը։

1735 թ.-ին Նոր Ջուղայի ինքնավար մարմինները պահանջել են բոլոր տասնակների բնակչութիւնից համապատասխան խոստումնագիր ներկայացնել այն մասին, որ իրենք թոյլ չեն տալու իրենց թաղում օթեւանելու ուրիշ վայրերից ժամանող անձանց՝ վարդապետների, քահանաների, ասնաֆքարների, դուքանդարների եւ այլն։ Մէջ բերելով տասնակներից մէկի (թաղվալէնց տասնակի) ներկայացրած խոստումնագրի բնագիրը եւ ուսումնասիրելով միւս տասնակների նոյնատիպ խոստումնագրերը, Հ. Տէր-Յովհանեանցը կազմել է 1735 թ.-ի տասնակների ցանկն ըստ այն անունների, որոնք գործածութեան

57. Կարապետ եպս Ամատունի, *Ոսկան Վարդապետ Երեւանցի եւ իւր ժամանակը*, Վենետիկ, 1975, էջ 119։

մէջ են եղել այդ ժամանակ։ Ստորեւ բերում ենք այդ ցանկը, իրաքանչիւրի առջեւ դնելով հերթական համարանիշ.

(1) Դիլաքէնց, (2) Մեծ Խօջէնց, (3) Ֆիրմանէնց, (4) Գիլանէնց, (5) Բաղրամէնց, (6) Աւագէնց, (7) Միրմանէնց, (8) Զէքէնց, (9) Իսրայէլէնց, (10) Ֆանոսէնց, (11) Թօփչէնց, (12) Զախաթունէնց, (13) Ղօշղարէնց, (14) Թաշվալէնց, (15) Ազիզանէնց, (16) Տէր Անանէնց, (17) Մուշեղէնց, (18) Ղարաջանէնց, (19) Աւագ-Եղանէնց, (20) Դաւթէնց[58]։

Բացի սրանից, նոյն աշխատութեան մէջ, հրատարակուած է նաեւ մէկ ուրիշ ցանկ, որով ամփոփուած են 1770-ական թուականներին Նոր Զուղայի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոսի անցկացրած մարդահամարի տուեալները։ Այստեղ արուած են Նոր Զուղայի արուարձանների եւ տասնակների անունները՝ կից թուանշաններով, որոնք ցոյց են տալիս, թէ տուեալ թաղում կամ տասնակում այդ ժամանակ ընակուելիս են եղել այսքան (ըստ բերուած թուանշանի) արական ընակիչ. «Թէ քահանայ եւ թէ աշխարհական»,— ինչպէս գրուած է առաջին տողում[59]։

(1) Երեւան (տասնակ)	—	199
(2) Գասկն	—	6
(3) Թարվիզեցիք եւ Դաշտէ	—	136
(4) Թօփչէնց	—	5
(5) Մուշեղէնց	—	29
(6) Տէր Անանէնց	—	24
(7) Զախաթունէնց	—	34
(8) Խօջայ Նաղարէնց	—	70
(9) Աւագ Դանէնց	—	59
(10) Ազիզանէնց	—	49
(11) Իսրայելէնց	—	73
(12) Միրմանէնց	—	45
(13) Գիլանէնց	—	28
(14) Դիլաքէնց	—	58
(15) Զէքէնց	—	50
(16) Քօչերն եւ Դավռարաղ	—	75
(17) Բաբայ Փանոսէնց	—	44

58. Հ. Տէր-Յովհաննեսեանց, նշ. աշխ., Ա. հատ., էջ 40-42։

59. Պէտք չէ անտեսել եւ այն հնարաւորութիւնը, որ այդ թուանշաններով ցոյց է տրուում ոչ թէ արական բնակչութեան, այլ տուեալ թաղում գոյութիւն ունեցող ընտանիքների կամ տների քանակը։

(18) Թաղվալէնց — 34
(19) Բաղրամէնց — 65
(20) Ղարադանէնց — 103
(21) Ծիրմանէնց — 80
(22) Ղոչղարէնց — 70
(23) Թօփչէնց — 46
(24) Զարսուն — 135:

Ընդամէնը 1517 տղամարդ կամ տանուտէր: Տանակների թիւը որոշելու համար այս ցանկից դուրս ենք հանելու 1, 2, 3 եւ 16 համարանիշները, որոնք Նոր Զուղայի մէջ չէին մտնում, այլ ինչպէս նշուել է, առանձին բնակավայրեր էին համարւում՝ ունենալով զիւղական համայնքի իրենց վարչութիւնները: Ցանկից հանելով այդ միաւորները, դարձեալ ստացւում է նոյն քսան Թաղ-տասնակների թուարկումը: Տասնակների 20 անուններից 16-ը, 1735 թ·ի ցանկի հետ ճշդօրէն համընկնում են[60]:

Այսպէս, նոյնական են առաջին եւ երկրորդ ցանկերի հետեւեալ համարանիշ միաւորները·

3–21: 4–13: 5–19: 6–9: 7–12: 8–15: 9–11: 10–17: 11–4 (կամ էլ 23): 12–7: 13–22: 14–18: 15–10: 16–6: 17–5 եւ 18–20:

Նոր Զուղայի Թաղ-տասնակների քանակն որոշելուց եւ 1735 թ. եւ 1770-ական թթ. անունների հետ ծանօթանալուց յետոյ, կրկին անդրադառնալով 1671 թ·ի ռուսական իշխանութիւններին Նոր Զուղայի համայնքի մեծամեծերի կողմից ներկայացրած փաստաթղթի ստորագրութիւններին, դուար չէ այլեւս յանգել այն եզրակացութեան, որ Նոր Զուղայի քալանթարից եւ ուստաբաշուց բացի այս վաստաթուղթն իրենց ստորագրութիւններով ու կնիքներով հաստատող անձինք հենց Նոր Զուղայի Թաղապետերը կամ տասնակաւագներն են եղել:

1671 թ·ից մինչեւ 1735 թ· անցել էին վաթսուն չորս երկար ու ձիգ տարիներ, որոնց ընթացքում շատ փոփոխութիւններ էին տեղի ունեցել Նոր Զուղայի տնտեսական կեանքում: Աֆղանների աւերիչ

60· 1735 թ·ի ցանկում մի շարք անուններ բերուած են «եանց» վարչաւորութեամբ, բոլորը դարձրել ենք միօրինակ՝ «էնց» Նոր Զուղայի բարբառին համապատասխան ու հարազատ (օրինակ, Միրմանեանց–Միրմանէնց): Զորս դէպքերում կան փոքր տարբերութիւններ, որոնք կարող են բացատրուել ինչպէս գրչագրական վրիպումով, այնպէս էլ տարիների ընթացքում կրած ձեւափոխութեամբ: Դրանք են Աւագեանց–Աւազդանէնց (6–9), Փանոսեանց–Բաբայ Փանոսէնց, Աղիջանեանց–Ազիզջանէնց, Ղարաջանեանց–Ղարադանէնց:

արշաւանքների եւ դաժան տիրապետութեան տարիներին, մեծահարուստ շատ ընտանիքներ էին լքել իրենց հայրենի քաղաքը եւ բնակութիւն հաստատել Հնդկաստանի, Իրաքի, Ռուսաստանի եւ Եւրոպայի նշանաւոր կեդրոններում։ Դրանց մէջ մեծ հաւանականութեամբ եղել են նաեւ տասնակաւագի պաշտօն գրաւած անձինք։ Նախորդների փոխարէն հրապարակ էին իջել, դիրք գրաւել ու միջոցներ կուտակել ուրիշ դերդաստաններ, համապատասխանաբար իրենց համար տեղ ապահովելով քաղաքի ինքնավարութեան մարմիններում։ Չնայած այս փոփոխութիւններին, 1671 եւ 1735 թթ. ցանկերի համեմատութիւնը երեւան է բերում անունների որոշակի ընդհանրութիւններ։

Այսպէս, 1671 թ.ի փաստաթուղթը ստորագրողներից երրորդը Աղափիրի Զախաթունենցն է եւ Նոր Ջուղայի տասնակներից մէկը Զախաթունէնց տասնակ է կոչուել նաեւ հետագայում՝ ԺԸ. դարի ընթացքում, վկայակոչուած լինելով ե՛ւ վերոյիշեալ Ա. ցանկի (12–րդ տող) ե՛ւ Բ. ցանկի (7–րդ տող) մէջ։ Մարդար Շահրիմանէնցը ստորագրողներից չորրորդն է։ Այդ նշանաւոր դերդաստանի գլխաւոր ճիւղի ներկայացուցիչները ԺԸ. դարի 30–ական թթ. արդէն դանւում էին Նոր Ջուղայից դուրս, սակայն հայրենի քաղաքում բնակւում էին նոյն դերդաստանի ճիւղերից մէկի անդամները՝ Բաղրամէնց ազգանունով։ Բաղրամէնց տասնակը յիշատակուած է Ա. (5–րդ տող) եւ Բ. (19–րդ տող) ցանկերում։ Փաստաթղթի ստորագրողներից մէկի՝ Սաֆար Թոփչենցի անունով է կոչուել նոյն տասնակը եւ հետագայում։ 1671 թ.ին տասնակաւագներ են եղել Գերաքենց դերդաստանից սերուած երկու խոջաներ՝ Զաքարն ու Աւետիքը։ Ցայտնի է, որ այդ դերդաստանի մի ճիւղը կոչուել է Միրմանեան։ Միրմանէնց անունով տասնակի հանդիպում ենք նաեւ ԺԸ. դարի վերոյիշեալ ցանկերում (Ա–7 եւ Բ–12)։ Մինաս Ֆանոսէնցի կամ նրա հօր՝ Ֆանոսի, անունով տասնակը, նոյնպէս, այդ անունով գոյատեւել է յաջորդ դարում (Ա–10 եւ Բ–17)։ Այդտեղ, հաւանաբար, բնակուել են եւ տասնակաւագի պաշտօն են գրաւել Խոջա Մինասի շառաւիղները, որոնց մի ճիւղը հետագայում մեծ դեր է կատարել Նոր Ջուղայում, ճանաչուած լինելով Խոջա–Մինասէնց, նաեւ Էմնիազէնց անուններով։

Այսպիսով, պարզ է դառնում, որ Նոր Ջուղայի համայնքի անունից ռուսական պետական մարմինների հետ բանակցութիւններ վարելու ուղարկուած Գրիգոր Լուսիկովի (Լուսիկենցի) լիազորութիւնները հաստատել են քալանթարի եւ ուստաբաշու հետ միասին ոչ թէ ինչ–որ (գոյութիւն չունեցող) առեւտրական կոմպանիայի ղեկավար անձինք կամ էլ մեծահարուստ վաճառականներ, այլ հայաքաղա-

քի 20 թաղամասերի կամ տաոնակների այդ օրերի աւագները[61]:

Յանգելով այս կարեւոր հետեւութեանը, անհրաժեշտ է մէկ անգամ եւս շեշտել այն հանգամանքը, որ հայ-ռուսական տնտեսական, հետագայում նաեւ մշակութային ու քաղաքական կապերի սերտացման համար մեծ նշանակութիւն ունեցող 1667 թ.ի պայմանագիրը եւ հետագայի բոլոր համաձայնագրերը (որոնցմով ճշդրտւում էին այդ նշանաւոր փաստաթղթի տարբեր կէտերը) կեանքի էին կոչւում Նոր Ջուղայի հայկական համայնքի ինքնավար մարմինների ղեկավարների՝ քալանթարի, ուստարաշու եւ տաոնակաւագների նախաձեռնութեամբ: Եւ այս եզրակացութեամբ մերժւում է Նոր Ջուղայի հայկական առեւտրական ընկերութեան մասին շրջան առած եւ ճանաչում գտած այն տեսակէտը, որի համաձայն ԺԷ. դարի 60-ական թուականներին Նոր Ջուղայում գոյութիւն է ունեցել եւրոպական երկրների արեւելա-հնդկական կոմպանիաների օրինակով ստեղծուած առեւտրական մի հզօր կազմակերպութիւն, որն իրաւունք է ունեցել իր անունից պայմանագրեր կնքելու տարբեր երկրների պետական մարմինների հետ եւ այլն: Նոր Ջուղայի հայկական համայնքի ինքնավար մարմինների ղեկավարները՝ քալանթարը, ուստարաշին ու թաղապետերն էին, որ համայնքի անունից յարաբերութիւնների մէջ էին մտնում ե՛ւ Իրանի պետական առաջնորդների, ե՛ւ այլ երկրների պետական մարմինների հետ, ստանձնում որոշ պարտաւորութիւններ, համաձայնութիւններ կայացնում, պայմանագրեր ստորագրում եւ այլն:

---

61. Ստորագրողները, սակայն, 20 անձինք չեն, այլ՝ 21: Այդ մէկի տարբերութիւնը, ըստ երեւոյթին, պէտք է բացատրել այն իրողութեամբ, որ բացի Նոր Ջուղայի թաղամասերի աւագներից, փաստաթղթի տակ իր ստորագրութիւնն է դրել նաեւ Նոր Ջուղային կից կառուցուած հայաբնակ արուարձաններից մէկի, ամենայն հաւանականութեամբ, ամենախոշոր արուարձանի՝ Նոր Երեւանի, տանուտէրը:

THE ARMENO-RUSSIAN TRADE AGREEMENT OF 1667 AND THE AUTONOMOUS BODIES OF NEW JULFA

SHOUSHANIG KHATCHIGUIAN

(Summary)

It has been accepted by historians that the Armeno-Russian trade agreement of 1667 was signed by the representatives of the Russian government on one side, and the Armenian Trade Company of New Julfa (Persia) on the other.

After carefully studying the available primary sources concerning the business and trade activities of the Armenian community of New Julfa and its administrative bodies, the author has concluded that there has never been an Armenian Trade Company in New Julfa in the European sense of it. R. Romotamsky and K. Loussigov, who signed the 1667 agreement, were the authorized representatives of the autonomous board of New Julfa.

The ruling board of the autonomous city of New Julfa were represented by the twenty governors of the city's twenty independent quarters, by the head of the trade unions and by the **kalantar** (the board leader, who was elected by the community and approved by the Shah). All members of the ruling board came from the very rich merchant families, known as **khojas**.

In the article also is discussed the rights, obligations and activities of the ruling board of the autonomous city of New Julfa.